ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան « 21 » 01 2022թ.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն (այսուհետ նաև՝ Ծառայություն, Պատվիրատու), ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Աշոտ Ավագյանի կողմից, և քաղաքացի Քրիստինե Ենոքի Դանիելյան (այսուհետ' Կատարող, նույնականացման քարտ' 010661858, տրված' 13.11.2018թ., 006-ի կողմից, սոց. քարտ' 5704920365) մյուս կողմից (միասին' Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ' Պայմանագիր) հետևյալի մասին.

1. *Պայմանագրի առարկան*

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը հանձն է առնում մատուցել տեսա-լուսանկարահանման և մոնտաժման ծառայություններ:

2. *Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները*

2.1 *Կատարողը պարտավոր է.*

2.1.1 աշխատանքները կատարել անձամբ,

2.1.2 աշխատանքները կատարել Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամկետներին համապատասխան,

2.1.3 իր միջոցներով վերացնել աշխատանքների կատարման ընթացքում իր մեղքով տեղ գտած թերությունները,

2.1.4 Պատվիրատուին անհապաղ տեղեկացնել աշխատանքների կատարումը շարունակելու կամ դրանց աննպատակահարմարության մասին:

2.1.5 Չտարածել Ծառայությունների մատուցման ընթացքում իրեն հայտնի դարձած ծառայողական, առևտրային, բանկային և/կամ այլ գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը:

2.2 *Կատարողն իրավունք ունի*

2.2.1 Պայմանագրի համաձայն, Ծառայությունները մատուցելու դեպքում, Պատվիրատուից պահանջել վճարելու Պայմանագրի 3.1 կետով նախատեսված վարձատրությունը:

2.3 *Պատվիրատուն պարտավոր է*

2.3.1 կատարողին անհրաժեշտ պայմաններ ստեղծել աշխատանքի կատարման համար,

2.3.2 ընդունել կատարված աշխատանքները և վճարել դրանց դիմաց,

2.3.3 վճարել Կատարողի կատարած ծախսերը, եթե աշխատանքների կատարման ընթացքում ի հայտ է գալիս աշխատանքները շարունակելու անհնարինություն կամ աննպատակահարմարություն Կատարողի մեղքից անկախ հանգամանքների հետևանքով:

2.4 *Պատվիրատուն իրավունք ունի*

2.3. Օգտագործել աշխատանքների իրավական պահպանության ենթակա արդյունքները:

3. ***Վճարման կարգը և ժամկետները***

3.1 Պատվիրատուն Կատարողին վճարումները կատարում է պայմանագրի կատարողական ակտը երկկողմանի ստորագրելուց հետո՝ սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող №1 հավելվածով սահմանված սակագներով (առանց հարկային պարտավորությունների և օրենքով սահմանված պարտադիր վճարների):

3.1.1 Սույն պայմանագրի 3.1-րդ կետում նախատեսված վճարվող գումարի մեջ ներառվում է նաև տրանսպորտային ծախսերը, ներառյալ՝ աշխատանքի կատարման վայր հասնելու համար առաջացող, ինչպես նաև՝ համապատասխան տրանսպորտային միջոցով գույքի տեղափոխման ծախսերը:

3.2 Հարկային պարտավորությունների և օրենքով սահմանված պարտադիր վճարների հետ կապված հարցերի լուծման պարտականությունը դրվում է Պատվիրատուի վրա, եթե վճարման պահին կողմերն այլ համաձայնության չգան:

4. ***Պայմանագրի գործողության ժամկետը***

4.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից կնքման պահից և գործում է մինչև 21.01.2023թ.:

5. Պայմանագրի վաղաժամկետ լուծումը

5.1 Պատվիրատուն կարող է ցանկացած պահի միակողմանիորեն վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ այդ մասին գրավոր ծանուցելով Կատարողին:

5.2 Պայմանագիրը համարվում է վաղաժամկետ լուծված Կատարողի ծանուցվելու պահից:

5.3 Կատարողը համարվում է պատշաճ ծանուցված, եթե ծանուցումն ուղարկվել է Պայմանագրում Կատարողի նշած հասցեով՝ նույնիսկ եթե որևէ պատճառով այն վերջինիս կողմից անձամբ չի ստացվել (և/կամ վերադարձվել է Պատվիրատուին):

6. **Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների Ծառայությունների դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ***Այլ պայմաններ***

7.1 Կողմերի միջև Պայմանագրի պայմանների կատարման ընթացքում ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ դատական կարգով:

7.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

7.3 Պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

7.5 Պայմանագրի որևէ մասի գործողության դադարեցումը, չեղյալ հայտարարելը կամ անվավերությունը չի հանգեցնում մյուս մասերի դադարեցմանը, չեղյալ հայտարարելուն կամ անվավերությանը:

7.6 Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

6. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	**Կատարող**
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն Ք.Երևան, Հալաբյան 41ա ՀՎՀՀ 01223338 Հ/Հ 900011288025 Կենտրոնական Գանձապետարան Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ա. ԱՎԱԳՅԱՆ ստորագրություն Կ.Տ.	Ա.Ա.Հ. Քրիստինե Դանիելյան Հասցե՝ ք. Երևան Ավան Դուրյան 28 շենք բն. 51 Հ/Հ 1570029367950200 Ամերիաբանկ ՓԲԸ Նույնականացման քարտ ' 010661858 տրված 13.11.2018թ. 006-ի կողմից ստորագրություն

Հավելված « 21 » 01 2022 **թ-ին կնքված պայմանագրի**

ՍԱԿԱԳՆԵՐ

ԻՆՖՈԳՐԱՖԻԿ ԵՎ ԱՆԻՄԱՑԻՈՆ ՀՈԼՈՎԱԿՆԵՐ, ՏԵՍԱ-ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՄՈՆՏԱԺՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Ծառայություն	Գին (ՀՀ Դրամ)
1.	Լուսանկարահանում	1 ժամ-10000 ՀՀ Դրամ
2.	Տեսանկարահանում	1 ժամ 1 խցիկ - 10000 ՀՀ Դրամ
3.	Վիդեո մոնտաժ	1 ժամ 1 խցիկ՝ 10000 ՀՀ Դրամ 1 ժամ 2 խցիկ՝ 17000 ՀՀ Դրամ
4.	Շնչյունային ձայնագրման տեխնիկական ապահովում	1ժամ - 10000 ՀՀ Դրամ
5.	Ձայնագրում	1 ձայնային տեքստ- 10000 ՀՀ Դրամ
6.	Ինֆոգրաֆիկ և անիմացիոն հոլովակներ	1 հոլովակ- 40000-50000 ՀՀ Դրամ

Պատվիրատու

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
Ք.Երևան, Հալաբյան 41ա
ՀՎՀՀ 01223338
Հ/Հ 900011288025 Կենտրոնական
Գանձապետարան
Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
Ա. ԱՎԱԳՅԱՆ

ստորագրություն

Կ.Տ.

Կատարող

Ա.Ա.Հ. Քրիստինե Դանիելյան

Հասցե՝ ք. Երևան Ավան Դուրյան 28 շենք բն. 51

Հ/Հ 1570029367950200 Ամերիաբանկ ՓԲԸ

Նույնականացման քարտ ' 010661858 տրված 13.11.2018թ. 006-ի կողմից

ստորագրություն